Արձանագրություն N4

<<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 հունիսի 2018թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Վ. Սարգսյանը Հ. Սիրունյանը և Ս. Աբազյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

<<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա>> ծածկագրով մրցույթի մասնակից ընկերությունների ներկայացուցիչներ՝

<<Արտեզիա>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Միրզախանյանը,
<<Աշոկ շինարարական ֆիրմա>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Դանիելյան,
<<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Պետրոսյանը:

1. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝ ՀՀ Արմավիրի մարզում նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա>> ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների շուրջ բանակցություններ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Ա. Բալայանը և հրապարակեց յուրաքանչյուր մասնակցի տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները՝ մյուս մասնակիցների համար:

2. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով մրցույթի 2, 3, 4 և 5-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած <<Վարուխ>> և <<Ատլանտ>> ՍՊԸ կոնսորցիումի, <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ի և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի կողմից հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Ա. Բալայանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ <<Վարուխ>> և <<Ատլանտ>> ՍՊԸ կոնսորցիումի, <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ի և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը: Փաստաթղթերի ուսումնասիրության և քննարկման արդյունքում որոշվեց, որ <<Վարուխ>> և <<Ատլանտ>> ՍՊԸ կոնսորցիումի, <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ի և <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով ներկայացված պահանջներին.

3. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին (05.06.2018թ. ժամը 11:00), ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ն առաջարկեց 1-ին չափաբաժնի համար 50 000 000 ՀՀ դրամ (նախկինում առաջարկված 61 000 000 ՀՀ դրամի փոխարեն), իսկ 6-րդ չափաբաժնի համար՝ 45 000 000 ՀՀ դրամ (նախկինում առաջարկված 55 000 000 ՀՀ դրամի փոխարեն), մյուս մասնակից ընկերությունների կողմից գնային նոր առաջարկներ չներկայացվեցին:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հանձնաժողովը որոշեց.

1. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ին:

2. 1-ին և 6-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ին առաջարկել՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 5 և 5.1 և 5.2):

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է 01.06.2018թ.:

05.06.2018թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և գնահատման թերթիկների ադյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

4. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ, 3-րդ, չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Վարուխ>> և <<Ատլանտ>> ՍՊԸ կոնսորցիումին, 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<ՎԱԼՄԼ>> ՍՊ և 5-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊ ընկերություններին հայտարարել ընտրված մասնակիցներ:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Բալայան

_____ Է. Մխիթարյան

Անդամներ _____ Վ. Սարգսյան

_____ Հ. Սիրունյան

_____ Ս. Աբազյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան

Արձանագրություն N 5
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 հունիսի 2018թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Վ. Սարգսյանը Հ. Սիրունյանը և Ս. Աբազյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտերը ներկայանելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 01.06.2018թ.:

05.06.2018թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը:

Հիմք ընդունելով ստացված եզրակացությունը, մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և ամփոփելով գնահատման թերթիկները՝ «ՀՀ Արմավիրի մարզում նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. 1-ին և 6-րդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ին և հայտարարել ընտրված մասնակից.
2. ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/3-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով <<ՎԱԼՄԼ>> ՍՊԸ-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնների մասով <<Վարուխ>> և <<Ատլանտ>> ՍՊԸ կոնսորցիումին և 5-րդ չափաբաժնի մասով <<Վանդ-ԳԱՍՍ>> ՍՊ ընկերություններին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել.
   - Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
4. Ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Բալայան

_____ Է. Մխիթարյան

Անդամներ _____ Վ. Սարգսյան

_____ Հ. Սիրունյան

_____ Ս. Աբազյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան